Պարույր Սևակ

Անհարց պատասխան

Ես վերածնողն եմ խորին լռության
Եվ թարգմանիչը անորոտ շանթի.
Գարնան աշկերտ եմ
Ու սիրո վարպետ.
Իմ կաթնեղբայրն է երաժիշտ քամին,
Եվ ազգականը՝ խորհող անձավը.
Ես վստահության մերձ - մտերիմն եմ,
Բարևի ծանոթ՝ հաշողությանը.
Ու ճամփորդական կարճ ծանոթությամբ
Սիրուհիս դարձավ խոհեմությունը՝
Ամե՛ն ինչ կշռող խոհեմությունը,
Կոկլիկ ու սոկլիկ, մի՛շտ շրջահայաց,
Բայց, փա՛ռք աստղծու, բանը չհասավ
Ո՛չ ամուսնության,
Ո՛չ էլ զավակի,
Որ եթե ծնվեր՝ անուն փնտրելիս
Պիտի, ստիպված, խեղճ մատը դրվեր
Եղկելու վրա կամ Ողորմելու...

18.XI.1959թ.
Չանախչի